

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 5/7

26 ապրիլի 2016 թ.

Քննարկվեց «Դայմոնդ Հաուս Հոթել» ՍՊԸ 22.03.2016թ-ի գանգատը ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ 15.03.2016թ-ի թիվ 6120090 ակտի դեմ:

«Դայմոնդ Հաուս Հոթել» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.

Ի պատասխան ներկայացված ՀԴՄ կիրառման ճշտության ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ 15.03.2016թ-ի թիվ 6120090 ստուգման ակտի «Դայմոնդ Հաուս Հոթել» ՍՊԸ-ն (այսուհետ նաև ընկերություն) հայտնում է, որ ընկերության կողմից չի խախտվել ՀՀ կառավարության 01.08.2013թ-ի թիվ 846-Ն որոշման որևէ կետ:

Համաձայն նշված որոշման հավելված 2-ով սահմանված կարգի 41-րդ կետի 1-ին ենթակետի տուգանքը կիրառելի չէ, քանի որ տեղադրված տեսախցիկներով ֆիքսվել է հաճախորդի սպասելաժամանակը՝ 5 վարկյան, իսկ քիչ անց ներկայացված հարկային տեսուչին տրամադրվել է ոչ միայն արդեն իսկ տպված ՀԴՄ կտրոնը, այլ նաև հարկային տեսուչի պահանջով Z հաշվետվության արդյունքը:

Ելնելով վերը նշված հանգամանքներից ընկերությունը խնդրում է ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ 15.03.2016թ-ի թիվ 6120090 ակտով նախատեսված տուգանքը չկիրառել:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ պետի 19.02.2016թ-ի թիվ 6120090 հանձնարարագրի համաձայն «Դայմոնդ Հաուս Հոթել» ՍՊԸ-ում կատարվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ 15.03.2016թ-ի թիվ 6120090 ակտը (այսուհետ նաև Ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել 150.000 դրամ:

Ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ ֆիզիկական անձ Գայանե Կազարյանի կողմից 02.03.2016թ-ին ժամը 16:20-ին սահմաններում ք.Երևան, Արամի 86 հասցեում գործող «Դայմոնդ Հաուս Հոթել» ՍՊԸ-ում կատարվել է հյուրանոցային ծառայության մատուցման դիմաց 4700 դրամի չափով համալրում, սակայն վարչարար Ալվինա Խաչիկյանը համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չի տրամադրվել: Ստուգում իրականացնող անձինք ներկայացրել են ծառայողական վկայականները և ուսումնասիրության հանձնարարագիրը՝ ծանոթացման: Ընկերության վարչարար Ալվինա Խաչիկյանը տվել է հայտարարություն, որ ամրագրված սենյակի համար վճարում կատարելիս ՀԴՄ սարքում գումարը մուտքագրելուց հետո ՀԴՄ սարքը կտրոնը ուշ է տրամադրել կապի խափանման պատճառով, որի հետևանքով հաճախորդին կտրոն չի տրամադրվել:

Ստուգմամբ պարզվել է, որ խախտվել են ՀՀ կառավարության 01.08.2013թ-ի թիվ 846-Ն որոշման Հավելված 2-ով սահմանված ՀԴՄ կիրառման կարգի 17-րդ և 23-րդ կետի պահանջները, որը նույն կարգի 40-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն դիտվում է

որպես ՀԴՄ-ների շահագործման կանոնների խախտում: Արդյունքում կիրառվել է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված պատասխանատվությունը՝ գումարով 150.000 դրամ:

Քննարկման ընթացքում պարզվեց, որ ֆիզիկական անձ Գայանե Կազարյանի կողմից 02.03.2016թ-ին ժամը 16:20-ին սահմաններում «Դայմոնդ Հաուս Հոթել» ՍՊԸ-ում կատարվել է հյուրանոցային ծառայության մատուցման դիմաց 4700 դրամի չափով համալրում: Ընկերության վարչարար Ալվինա Խաչիկյանի կողմից գումարը մուտքագրել է ՀԴՄ, սակայն ծրագրի խափանման պատճառով այդ պահին Գայանե Կազարյանին ՀԴՄ կտրոն չի տրամադրվել: Սակայն մի քանի րոպե անց, երբ ներկայացել են ստուգումն իրականացնող անձինք վճարված գումարի դիմաց ՀԴՄ կտրոն չտրամադրելու փաստը արձանագրելու համար, պարզել են, որ համապատասխան գումարի ՀԴՄ կտրոնն արդեն իսկ տպված է: Այսինքն, հաճախորդի կողմից վճարված գումարը մուտքագրվել է ՀԴՄ: Նշված հանգամանքը հաստատվեց նաև նիստին ներկա գտնվող ստուգումն իրականացրած անձանց կողմից: Դա է եղել պատճառը, որ ստուգումն իրականացնող անձանց կողմից չեն կատարվել խախտման փաստն ապացուցելուն ուղղված համապատասխան գործողությունները: Մասնավորապես, Ակտում չկա գրառում ՀԴՄ-ից Z հաշվետվություն դուրս բերելու, չմուտքագրված գումարը մուտքագրելու և կրկին անգամ Z հաշվետվություն դուրս բերելու մասին:

Հարկ է նշել, որ ՀՀ կառավարության 01.08.2013թ-ի թիվ 846-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 23-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն գանձապահը պարտավոր է ապրանքները հանձնելու պահին՝ գնորդից կամ մատուցված ծառայությունների դիմաց՝ պատվիրատուից գումար ստանալու դեպքում, իսկ կանխավճարների դեպքում՝ գումարը մուտքագրելուց անմիջապես հետո տրամադրել ՀԴՄ կտրոն:

Քննարկվող դեպքում չնայած այն հանգամանքին, որ ֆիզիկական անձ Գայանե Կազարյանի կողմից գումարը վճարելուց անմիջապես հետո չի տրամադրվել ՀԴՄ կտրոն, սակայն տեղի ունեցածում, ըստ էության, բացակայում է ընկերության մեղքը, քանի որ հաճախորդին ՀԴՄ կտրոն չտրամադրելը պայմանավորված է եղել կապի խափանմամբ:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ տվյալ դեպքում ընկերության մեղքի բացակայությամբ պայմանավորված «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված պատասխանատվությունը կիրառելի չէ:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի, «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո Ր Ո Չ Ո Ս Է՝

Անվավեր ճանաչել ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ 15.03.2016թ-ի թիվ 6120090 ակտը:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ